



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

27 հունիսի, 2019 թվականի № 34-Լ

«ՇԻՐԱԿԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՍՄԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ/ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ, ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՈՒ ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի 2012 թվականի դեկտեմբերի 26-ի N 61-Լ որոշմամբ հաստատված «Հանրային հեռուստառադիոընկերության ֆինանսական միջոցների օգտագործման կարգի», «Շիրակի հանրային հեռուստառադիո» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրության պահանջները՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել Ընկերության 2018 թվականի եկամտի աղբյուրների և ապրանքների/ծառայությունների ձեռքբերումների, եկամուտների և ծախսերի ու դրամական հոսքերի նախահաշիվների փաստացի կատարողականները՝ համաձայն սույն որոշման № 1, № 2, № 3 հավելվածների:
2. Հաստատել Ընկերության 2018 թվականի ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման նախահաշիվի փաստացի կատարողականը՝ համաձայն սույն որոշման № 4 հավելվածի:
3. Ընդունել ի գիտություն, որ 2018 թվականի տարեվերջին ՀՀ պետական բյուջեից ստացված ընթացիկ դրամաշնորհի գծով 7,615.3 հազ. դրամի մնացորդային գումարն ուղղվել է ՀՀ պետական բյուջեի գծով նախորդ տարիների կրեդիտորական պարտքերի մարմանը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

27 հունիս, 2018 թվականի
ք. Երևան